# Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան
# Անցումային մանկապարտեզ
## Հաճախակի տրվող հարցեր

**1. Ե՞րբ կարելի է իմ երեխային մանկապարտեզ արձանագրել**

Վերջերս, Կալիֆորնիայում նոր օրենք հաստատվեց, ըստ որի մանկապարտեզ սկսող երեխաների տարիքի պահանջը փոխվել է։ Համաձայն նոր օրենքի, երեխաները պետք է մինչև սեպտեմբերի 1-ը 5 տարեկան կամ ավելի տարիքով լինեն, որպեսզի կարողանան մանկապարտեզ արձանագրվել։ 2014-15 ուսումնական տարվանից սկսած, մանկապարտեզ մտնելու որոշակի օրը կլինի սեպտեմբերի 1-ը։ Օրենքը նաև ստեղծել է Անցումային մանկապարտեզի ծրագիր, որպեսզի այս նոր փոփոխությունից ազդված երեխաները հնարավորություն ունենան դպրոց հաճախեն և զարգացնեն իրենց գիտելիքները, որպեսզի հաջորդ տարի ավելի պատրաստված մանկապարտեզ հաճախեն։

**2. Ի՞նչ է Անցումային մանկապարտեզը (Transitional Kindergarten -TK)**

Անցումային մանկապարտեզը (TK) երկամյա մանկապարտեզի ծրագրի առաջին տարին է, որը գործածում է ձևափոխված մանկապարտեզի ուսումնական ծրագիր՝ համապատասխան երեխայի տարիքին և զարգացմանը։ Սա մի կամուրջ է նախակրթարանի և մանկապարտեզի միջև։ Երեխային թույլատրվում է TK հաճախել, եթե նրա 5-րդ տարեդարձը սեպտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 2-ը ընկած օրերի միջև է և ամեն ուստարի դրանից հետո։

**3. Որո՞նք են TK-ի առավելությունները**

Անցումային մանկապարտեզը առաջարկում է լրացուցիչ մեկ դպրոցական տարի, տարիքով փոքր աշակերտների համար։ TK-ը երեխաներին հնարավորություն է տալիս սովորել ուսումնապես հարուստ և մրցահրավերներով միջավայրում, որը և նպաստում է նրանց առաջընթացին։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, որոնք մանկապարտեզի պատրաստականության ծրագիր են հաճախել, ինչպիսին անցումային մանկապարտեզն է, շատ հավանական է, որ հաջողեն դպրոցում և քոլեջ հաճախեն։

**4. Ինչպե՞ս է TK-ը տարբերվում նախակրթարանից**

TK-ի ստանդարտները, ուսումնական ծրագիրը և ուսուցման պահանջները տարբերվում են մանկապարտեզից։
TK-ը մաս է կազմում մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանների հանրային ուսումնական սիստեմին և մանկապարտեզի ստանդարտներին է համապատասխանում։ TK-ը ավելացնում է երեխաների ձեռքբերած հմտությունները, որոնք նրանք նախակրթարանում են զարգացրել, որպեսզի կարողանան վստահորեն մանկապարտեզ սկսել։

**5. Ինչպե՞ս է TK-ը տարբերվում սովորական մանկապարտեզից**

TK-ի ուսումնական ծրագիրը հարմարեցված է փոքր երեխաների ուսումնական, հասարակական և զգացմունքային կարիքներին։ TK-ի միջավայրը ներգրավում է ավելի շատ հնարավորություններ՝ հասարակական-զգացմունքային, լեզվի և հաղորդակցության զարգացման, ինչպես նաև՝ բեմադրությունների, փոքր խմբերով դասավանդումների, կանխամտածված ուսուցման և ակտիվ մասնակցության միջոցով։

**6. Ինչպիսի՞ն է TK-ի ուսումնական ծրագիրը և համապատասխանու՞մ է ստանդարտ հիմունքներին։**

TK-ի ուսուցիչները, օգտագործելով յուրահատուկ մասնագիտական հիմունքներ, մանկապարտեզի նահանգային ստանդարտներին համապատասխան, պարապմունքների միջոցով օգնում են երեխաներին զարգացնել հասարակական կարողություններ, որոնք ինքնավստահության և հաղորդակցվելու կարողություններ կզարգացնեն երեխաների մոտ։ Նրանք ընթերցանությունը և մաթեմատիկայի միջոցով երեխաներին ուսումնական խաղերում են ներգրավում, որպեսզի բառեր և նախադասություններ սովորեցնեն և նրանց օգնեն հասկանալ մաթեմատիկայի գաղափարի հասկացությունը, ինչպիսին՝ հաշվելն ու հերթականությունն է։ TK-ում երեխաները սովորում են, հասարակական, մտային և ուսումնական հմտություններ, մանկապարտեզում հաջողությունների հասնելու, դասարաններում առաջնորդներ դառնալու և վստահորեն կառավարեն իրենց դպրոցական առօրյա սովորությունները։

**7. Որքա՞ն է TK-ի օրական դասաժամերի տևողությունը**

TK-ի օրական դասաժամերը նույնն են, ինչ որ մանկապարտեզինն է, որտեղ TK-ի ծրագիրն է գտնվում։

**8. TK-ը պարտադի՞ր է սեպտեմբերի 2-ից դեկտեմբերի 2-ի միջև ծնված երեխաների համար**

Անցումային մանկապարտեզի արձանագրությունը կամվոր է։ Դպրոցը պարտադիր է դառնում միայն այն դեպքում, երբ երեխան դառնում է 6 տարեկան։

**9. Արդյոք TK հաճախումները նու՞յնն են ինչ որ մանկապարտեզից մինչև 6-րդ դասարաններինը**

Պահանջվում են կանոնավոր հաճախումներ, ինչպես որ բոլոր մյուս տարրական դասարաններում է։

**10. Արդյոք իմ երեխան առաջադիմության թերթիկ կստանա՞**

TK հաճախող երեխաները առաջադիմության թերթիկ կստանան երկրորդ և երրորդ եռամսյակներին։

11. **Որքա՞ն է աշակերտների թիվը TK դասարանում**
TK դասարանում աշակերտների քանակը նույնն է ինչ որ մանկապարտեզում:

12. **Պարտադի՞ր է, որ TK-ի ուսուցիչը ուսուցելու որակավորում ունենա**
Բոլոր ուսուցիչները, ներառյալ TK-ի ուսուցիչները, պետք է Կալիֆորնիայի բազմակի առարկաներ ուսուցելու որակավորում ունենան:

13. **TK-ը աջակցություն կտա՞ անգլերեն չիմացող երեխաներին**
TK-ում՝ անգլերեն սովորող աշակերտներին կտրվի նույն մակարդակի ծառայություններ, ինչ որ երեխաները ստանում են մանկապարտեզում:

14. **Կարո՞ղ են մանկապարտեզի տարիք ունեցող աշակերտները TK հաճախել**
Եթե տեղ լինի և հաշվի առնվի յուրաքանչյուր պարագա և եթե երեխան ծնվել է 2011թ. օգոստոսի 1-ից սեպտեմբերի 1-ի միջև ընկած ժամակակահատվածի որևէ մեկ օր, ապա դուք կարող եք խնդրել, որ ձեր երեխային անրձանագրվի TK ծրագրում:

15. **Կարո՞ղ է իմ երեխան TK-ից միանգամից առաջին դասարան գնալ**
Անցումային մանկապարտեզն երկամյա տևողություն ծրագրի առաջին տարին է համարվում: Երեխան, որը հաճախել է TK, պետք է լրացնի սովորական մանկապարտեզի երկրորդ տարվա ծրագիրը, նախքան առաջին դասարան գնալը:

16. **Գլենդելի հանրային բոլոր դպրոցները TK-ի ծրագիր ունե՞ն**
Քանի որ TK-ի ծրագիրը ոչ բոլոր տարրական դպրոցներում է մատչելի, հետևաբար, ձեր երեխային արձանագրեք ձեր շրջանի դպրոցում: Աշակերտի աջակցության ծառայությունների գրասենյակը կապ կհաստատի ձեզ հետ, նրան TK-ի ծրագում տեղավորելու համար:

17. **Կարո՞ղ եմ ընտրել այն դպրոցը, ուր կցանկանայի, որ իմ երեխան TK հաճախեր**
Ձեր երեխան կտեղավորվի ձեր բնակավայրին ամենամոտ TK ծրագիր ունեցող դպրոցում: Ձեր նախընտրած դպրոցի խնդրանքը կվերանայվի, եթե այդ դպրոցում բաց տեղ լինի նրա համար:

18. **Կարո՞ղ է իմ երեխան մնալ հաճախած TK դպրոցում, շարունակելու մանկապարտեզի ուսումը**
Երբ աշակերտները հաջողությամբ ավարտեն անցումային մանկապարտեզը, նրանք կգրանցվեն ձեր բնակավայրին ամենամոտ մանկապարտեզում:

19. **Կարո՞ղ է իմ երեխան TK-ը կրկնի (retained)**
TK հաճախող երեխաները դասարանը չեն կրկնում:

20. **Ինչպե՞ս է TK-ն ազդում հատուկ ուսուցում ստացող աշակերտների վրա:**
Նույնը, ինչ որ ներկայում առաջարկվում է Անցումային մանկապարտեզի ծրագրում, հատուկ ուսուցման ծառայության համար, որն է «Անհատականացված ուսումնական ծրագիր»-ը (IEP):

21. **Կլինե՞ն երեխայի խնամատարություն/արտաժամյա հնարավորություններ իմ երեխայի համար**
Ձեր երեխան կունենա նույն խնամատարության/**երկարօրյա** արտաժամյա հնարավորությունները, ինչ որ դպրոցի բոլոր աշակերտներն ունեն: Խնդրվում է կապ հաստատել EEELP ծրագրի աշխատակիցների հետ՝ (818) 247-0775 հեռախոսահամարով տեղեկություններ ստանալու համար:

22. **Կարո՞ղ է իմ երեխան հաճախել Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի TK-ի ծրագիրը, եթե մենք կրթաշրջանի սահմաններից դուրս ենք բնակվում**
Արձանագրությունները կատարվում են ըստ հնարավոր տեղերի: Ծնողները կարող են Միջկրթաշրջանային թույլտվություն խնդրել, եթե տեղի կարելիություն լինի: Ամենայնիվ, մեր խորհուրդն է, որ ծնողները իրենց երեխաներին արձանագրեն իրենց բնակավայրի դպրոցում, մինչև թույլտվություն ստանալը:

23. **Կա՞ երկլեզու TK-ի ծրագիր**
Իսպաներեն երկլեզու իմերժեն TK ծրագիրն առաջարկվում է Մյուր տարրական դպրոցում: Այցելեք gusdmagnetandflag.com կայքէջը դիմումնագիր լրացնելու համար:

24. **Կարո՞ղ է իմ երեխան TK ծրագիր հաճախել մագնետ դպրոցում**
Մագնետ դպրոցներում TK ծրագիրը չի առաջարկվում:

Այս թեմայի վերաբերյալ, ձեր հարցերի և մտահոգությունների համար, կարող եք դիմել՝ Sherry Kully-ին skully@gusd.net էլփոստի հասցեով կամ զանգահարել՝ 818-241-3111 ext. 1524 հեռախոսահամարով: